

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑՆԵՐ

Ա. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղաքացիական հասարակության կոնցեպցիան քննարկման առարկա է եղել քաղաքական մտքի պատմության բոլոր ժամանակաշրջաններում և դիտվել որպես մարդկային հասարակության ժողովրդավարական կազմակերպման հիմնական նպատակներից մեկը: Այդ հիմնահարցին շատ թե քիչ անդրադարձել են դեռևս անտիկ ժամանակաշրջանի մտածողները:

Սոկրատեսի հայացքներում, Պլատոնի «Պետություն» և «Օրենքներ» աշխատությունների մեջ քննարկվում է արգարադատության և արգար պետության էությունը, որը նրանց կարծիքով պատմականորեն միանգամայն հնարավոր է թվում: Արիստոտելը իր «Պոլիտիկա» աշխատության մեջ քննադատում է Սոկրատեսի և Պլատոնի պատկերացումները հասարակության ու պետության կառուցման ու կառավարման ձևերի մասին: Նա պետությունը սահմանում է որպես քաղաքացիների համակեցության ձև, որին բնորոշ է որոշակի քաղաքական կառուցվածք: Նրա կարծիքով պետությունը բաղկացած է քաղաքացիներից, որոնք ունեն իրավունքներ և պարտականություններ: Սակայն պետությունը միակ համակեցության ձևը չէ, այլ կա նաև ընտանիք և քնակավայր, որոնք նախորդում են պետությանը: Պետությունը դառնում է նպատակ ընտանիքի և քաղաքացիների համար: Ըստ Արիստոտելի, մարդկային համակեցության նպատակը ոչ միայն պարզապես համատեղ ապրելն է, այլև երջանիկ ապրելը, որը հնարավոր է միայն պետության մեջ:

Հատկանշական են նաև Ցիցերոնի «Հանրապետության մասին» և «Օրենքների մասին» աշխատությունները, որտեղ քննարկվում է հասարակության անդամների իրավունքների հարցը: Ցիցերոնի հայացքները ամբողջովին կառուցված են հռոմեական իրականության և պատմության վրա: Նրա կարծիքով հասարակությունը, պետությունը և օրենքները պետք է անհրաժեշտորեն բխեն քաղաքացիների բնական իրավունքներից:

Այնուհետև իտալացի պատմաբան և պետական գործիչ Նիկոլո Մաքիավելին «Իշխանը», շեքսպիրյան «Մոլորություններ Տիտոս-Լիվիոսի առաջին տասը գրքերի վերաբերյալ» աշխատություններում հանգամանորեն վերլուծում է քաղաքացիների մասնակցությունը հասարակության կառավարման ու ղեկավարման գործերին՝ միաժամանակ հիմնավորելով կենտրոնացված պետության և կազմակերպված քաղաքականության անհրաժեշտությունը հասարակության գոյության ու անվտանգության ապահովման համար:

Քաղաքական մտքի զարգացման հասարակագիտական ուղղություններից մեկը ուսուպիզմն է: Թոմաս Մորը («Ուսուպիա»), Կամպանելան («Արևի պետություն») քննադատում են գոյություն ունեցող հասարակարգը և նկարագրում են այնպիսի հասարակարգ, որը կկարողանա առավելագույնս ապահովել անձանց բարեկեցիկ կյանքը: Այդպիսի հասարակարգի գոյության մասին ուսուպիան դառնում է քաղաքացիական գիտակցության կողմնորոշման անհրաժեշտ պայման:

Թոմաս Հորսի «Լեիաթան», «Քաղաքացու մասին» աշխատություններում նույնպես քննարկվում է պետության ու հասարակության ծագման ու գոյության հարցերը: Նա գտնում է, որ հասարակության ձևավորման պատճառ է դառնում առանձին մարդկանց միավորումը, որոնք բնականության թելադրանքով «հասարակական դաշինք» են կնքում միմյանց հետ: «Հասարակական դաշինքը» վերջ է գծում մարդկանց ցանկացած կամայականության ու անվստահության (մարդը մարդուն գայլ է, պատերազմ բոլորի դեմ): Հասարակության ձևավորումը պատճառ է հանդիսանում քաղաքացիների ու իրավունքների ապահովման համար:

Չոն Լոկը «Երկու ուսումնասիրություն կառավարության մասին» աշխատության մեջ պետության ու հասարակության ձևավորումը դիտում է որպես ելակետ մարդկանց զարգացման համար: Հասարակության ձևավորման հիմքը Լոկը համարում է մարդու «բնական վիճակը», սակայն չի ընդունում, որ այդ ժամանակ եղել է «պատերազմ բոլորի դեմ»: Նրա կարծիքով, հասարակության ու պետության ստեղծումը «հասարակական դաշինքի միջոցով» պահպանում

է «բնական վիճակին» հատուկ աղատութիւնը: Պետութիւնը, քաղաքացիական հասարակութիւնը պետք է պահպանեն ընդհանուր բարեկեցիկ կյանքը՝ միաժամանակ սահմանափակելով պետական իշխանութիւնը: Լուին է պատկանում այն հանրահայտ միտքը, որ լավ օրենքները ընդունելը դեռևս չի նշանակում դրանք լավ գործադրել: Լուրը հիմնադրին է նաև «իշխանութիւնի բաժանման» սկզբունքի մշակման, որը հետագայում ավելի համակարգված ձևով դրսևորվեց Շարլ Լուի Մոնտեսքիոյի «Օրենքների ոգու մասին» աշխատութիւնի մէջ: Պատահական չէ, որ Մոնտեսքիոյի համարում են «սահմանադրութիւնի հայր», քանի որ նրա՝ հասարակութիւնի կազմակերպման մասին սահմանած սկզբունքները անմիջական ազդեցութիւն են թողել ժամանակակից սահմանադրական կարգի ստեղծման ու զարգացման գործում: «Օրենքների ոգու մասին» աշխատութիւնի հիմնական ելակետը այն է, որ ցանկացած կառավարման ձև անհրաժեշտորեն կախված է տվյալ ժողովրդի կյանքի պայմաններից՝ աշխարհագրական, պատմա-մշակութային ոլորտներից: «Հասարակական դաշինքի» կողմնակիցներից է նաև Ժան Ժակ Ռուսսոն: «Հասարակական պայմանագիր» աշխատութիւնի մէջ Ռուսսոն նշում է, որ մարդիկ այդ ընդհանրութիւնի մէջ կորցնում են բնական ազատութիւնը և անսահման իրավունքը: Մարդը այդ ընդհանրութիւնի մէջ ձեռք է բերում քաղաքացիական ազատութիւն և սեփական էութիւնի իրավունք, սակայն Ռուսսոն դրա հետ միասին չի ընդունում իշխանութիւնների տարանջատման սկզբունքը և գտնում է, որ բոլոր մարդիկ պետք է մասնակցեն հասարակութիւնի կառավարմանը: Իմանուել Կանտի «Պրակտիկ բնականութիւնի քննադատութիւն», «Հավիտենական խաղաղութիւնի շուրջ», «Կրոնը սոսկ բնականութիւնի շրջանակներում» աշխատութիւնների մէջ պետութիւնի հասարակութիւն, իրավունքի հիմքը համարում է բարոյականութիւնը: Իրավական պետութիւնը, ըստ Կանտի, «հասարակական դաշինքի» հետևանք է, որին բնորոշ է քաղաքացիների ինքնուրույնութիւնն ու ազատութիւնը, որոնք անմիջական մասնակցութեամբ գործում է իշխանութիւնների տարանջատման սկզբունքը: Նա քննադատում է այն հասարակարգերը, որոնք պատերազմների միջոցով փորձում են իրավունք ձեռք բերել: Հասարակութիւնի համար խաղաղութիւնը հանդես է գալիս որպէս գերագույն քաղաքական բարիք: Նկատի առնելով այն, որ համեմատաբար ավելի ամբողջական ձևով հասարակութիւնի ձևավորման ուղիները մշակված են Հեգելի կողմից, մենք հիմնականում կանգ կանենք նրա հայացքների վերլուծութիւնի վրա:

Ըստ Հեգելի, քաղաքացիական հասարակութիւնի մէջ առանձին անձանց միավորումը, որպէս այդպիսին, վերջնական նպատակ է, որի նշանակութիւնը համընդհանուր կյանք վարելն է, իրենց հետագա վարքի բնույթի, առանձնահատուկ պահանջմունքների բավարարումը, որոնք ունեն իրենց ելակետը և արդյունքը: Դա նրանց համընդհանուր նշանակութիւնն է: Քաղաքացիական հասարակութիւնը հանդես է գալիս որպէս շերտավորում ընտանիքի և պետութիւնի միջև: Եթէ պետութիւնը ներկայացվում է որպէս տարրի անձանց միասնութիւն, որը սոսկ ընդհանրութիւն է, ապա նկատի է ունեւում որոշակի քաղաքացիական հասարակութիւն: Քաղաքացիական հասարակութիւնի առաջին սկզբունքը, ըստ Հեգելի, կոնկրետ անձն է, որն ինքն իր համար առանձնահատուկ նպատակ է, բայց այնպիսի առանձնահատուկ անձ, որը վերաբերվում է մյուս առանձնահատուկ անձանց նույնպիսի առանձնահատուկութեամբ:

Քաղաքացիական հասարակութիւնի երկրորդ սկզբունքը համընդհանուրն է: Առանձնահատուկ անձը մյուսների հետ փոխհարաբերութիւնի միջոցով համընդհանրութիւնի ձև է ստեղծում՝ բավարարելով պահանջմունքների իր համակարգը: Համընդհանուրը հանդես է գալիս որպէս առանձնահատուկ նպատակի սահմանափակում, միջնորդավորման հիմք, որպէս առանձնահատուկի գոյութիւնի անհրաժեշտ պայման և միակ շահանիշ, ինչպէս նաև՝ փոխադարձ հարաբերութիւնների ու կախվածութիւնի ամբողջական համակարգ: Քաղաքացիական հասարակութիւնի մէջ յուրաքանչյուրն ինքն իր համար նպատակ է, բոլոր մնացածն նրա համար ոչինչ է: Սակայն հաշի առնելով այն հանգամանքը, որ անձը քաղաքացիական հասարակութիւնի անդամ է, ապա մյուս բոլոր անդամները դառնում են առանձնահատուկ նպատակի իրագործման անհրաժեշտ պայմաններ: Քաղաքացիական հասարակութիւնի մէջ առանձնահատուկը և համընդհանուրը փոխկապված են և փոխադարձ պայմանավորված: Յուրաքանչյուր անդամ ինքնուրույն է, ազատ և իրավունք ունի զարգանալու ու դրսևորվելու իր բոլոր կողմերով միայն համընդհանուրի շրջանակներում: Քաղաքացիական հասարակութիւնի էութիւնն այն է, որ համընդհանուրը կապակցված է առանձնահատուկի ազատութիւնի և իրավունքի հետ: Այստեղ համընդհանուրն առանց առանձնահատուկի (կախված նրա գիտակցութիւնից և իրավունքներից) չի կարող ամբողջապէս իրացվել: Այսօրվա պայմաններում քաղաքացիական հասարակութիւնը բնորոշվում է այն առանձնահատուկութեամբ, որ դարձել է քաղաքացիների ազատութիւնների իրականացման անհրաժեշտ միջոց ու պայման: Այս առումով կարող ենք տարբերակել կա-

¹ Տե՛ս Գեգել. Փիլոսոփիա փրաւ, Մ., 1990, էջ 228.

² Տե՛ս նույն տեղը:

տարյալ (զարգացած) և անկատար (թերզարգացած) քաղաքացիական հասարակությունների Անկատար է այնպիսի քաղաքացիական հասարակությունը, որտեղ համընդհանուրի շրջանակներում մարդը դեռևս չի կարող հասնել իր ազատությունների ու իրավունքների իրականացմանը: Այս հասարակությունը չի ապահովում քաղաքացիների ազատությունների ու իրավունքների իրականացման անհրաժեշտ միջոցներ ու պայմաններ: Դա նշանակում է, որ այդպիսի քաղաքացիական հասարակության մեջ կամ բացակայում է, կամ էլ պարզապես նոր են ձևավորվում այդ տարրերը: Այստեղ ընդհանուր համակարգը դեռևս չի գործառուում որպես մեկ միասնական ամբողջություն: ԵՄՔ քաղաքացիական հասարակության համակարգի տարրերի միջև ծագի որոշակի գործառական անհամաձայնություն, ապա այդ համակարգը կամ կհաստատվի ճգնաժամային իրավիճակում, կամ կդադարի որպես այդպիսին գոյություն ունենալուց:

Անտիկ ժամանակաշրջանի հասարակության մեջ, ճիշտ է, կար համընդհանուրը, սակայն առանձնահատուկը դեռևս «ավարտված չէ», և այդ միջնորդավորվածությունը հասնելու մեջ ազատություն գոյություն չունի: Այդ պատճառով Հեգելը նշում է, որ ազատության ձևաբերման ընթացքում ձևավորվել է չորս համաշխարհային թագավորություն. 1. Արևելյան, 2. Հունական, 3. Հռոմեական և 4. Գերմանական:

Անտիկ հասարակության մեջ անձի զարգացումը դիտվում է որպես պետության, հասարակության կործանման պատճառ: Այսպիսի հասարակարգերի հիմքում ընկած էր կրոնական սկզբունքը կամ հոգևոր այլ սկզբունքներ: Այսպիսին է Սոկրատեսի, Պլատոնի պատկերացումը հասարակության կառուցման ու կազմակերպման մասին: Անձի ազատության ինքնուրույնության սկզբունքը, ըստ Հեգելի, առաջանում է սոսկ քրիստոնեական կրոնի ներսում (զերմանական աշխարհում): Ուստի արևելքում ազատ է միայն մեկը, հունական և հռոմեական աշխարհներում ազատ են մի քանիսը, իսկ գերմանական աշխարհում ազատ են բոլորը:

Հետևաբար՝ համընդհանուրի հետ և նրա հիմքի վրա միաժամանակ պետք է զարգանա և ձևավորվի առանձնահատուկը: Ենորհիվ այն բանի, որ քաղաքացիական հասարակության այդ երկու սկզբունքները փոխալսմանավորում են մեկը մյուսին՝ որոշելով ոչ միայն քաղաքացիական հասարակության, այլ նաև «ավելի բարձր» բարոյական ընդհանրության պետության բովանդակությունն ու ուղղվածությունը: Այդ իմաստով քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման հասնելու մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման գործում:

Քաղաքացիները պետության և քաղաքացիական հասարակության հարաբերության մեջ ունեն տարբեր բնույթի իրավունքներ և պարտականություններ: Անձը կարող է ունենալ որոշակի պարտականություններ և իրավունքներ սոսկ այնքանով, որքանով որ նա անդամ է քաղաքացիական հասարակության և պետության՝ քաղաքացի է: Քաղաքացիների ազատություններ ու իրավունքներ հասկացության էությունն այն է, որ նրանց առանձնահատուկ նպատակները, շահերը և ձգտումները համընդհանուրի շրջանակներում՝ ընտանիքում, քաղաքացիական հասարակության, պետության մեջ, դառնում են իրականություն: Ժամանակակից քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է տալիս մարդուն ձևավորվելու և զարգացնելու ինքն իրեն, որպես փնջնորայն ժայռահեղություն: և միաժամանակ նրան դիտելով համընդհանուր միասնության մեջ՝ պահպանելով նրան այդ ամբողջական համակարգում: Անձի իրավունքներն ու պարտականությունները միաժամանակյա անհրաժեշտություն են: Ենորհիվ այդ իրավունքների ու պարտականությունների, համընդհանուրի ու առանձնահատուկի փոխադարձ կապը պահպանվում է այնքանով, որքանով որ համընդհանուրը դառնում է առանձնահատուկ նպատակ և ընդհակառակը: Առանձնահատուկ շահերը, ձգտումները պետք է համաձայնեցվեն համընդհանուրի հետ, այսինքն՝ կատարելով իր պարտականությունները, դրա մեջ մարդը տեսնում է անհրաժեշտարար իր անձի ու սեփականության պահպանում: Անձը, ըստ Հեգելի, ընդհանրապես իրավասու է, այստեղից՝ «եղիք անձ և հարգիր մյուսներին որպես անձ»: ԵՄՔ քաղաքացիական հասարակությունը գտնվում է իր ձևավորման փուլում կամ անցողիկ փամանակաշրջանում, ապա այստեղ անձի պարտականությունների ու իրավունքների միջև հակասություն է առաջանում, քանի որ անձի պարտականություններն այս դեպքում «զերիշխում» են իրավունքներին: Իսկ եՄՔ քաղաքացիական հասարակությունը գտնվում է զարգացման ժամանակաշրջանում, ապա ընդհակառակը՝ իրավունքները «զերիշխում» են պարտականությունների վրա: Այսինքն՝ քաղաքացիական հասարակությունը՝ ավելի շատ տալիս է, քան պահանջում: Քաղաքացիական հասարակությունը կառուցվածքային առումով կազմված է հետևյալ տարրերից.

1. Պահանջումների համակարգ, 2. ազատության և սեփականության պահպանում արդարադատության միջոցով, 3. ոստիկանություն և կորպորացիա: Քաղաքացիական հասարակության կառուցվածքում Հեգելը առանձնացնում է նաև երեք խավ. 1. սուբստանցային՝ հո-

³ Տե՛ս նույն տեղը, էջ 93:

դատերի, ազնվականների և գյուղացիների, 2. արդյունաբերական՝ ֆաբրիկատերի, առևտրականների, արհեստավորների, 3. համընդհանուր՝ աստիճանավորների:

Անձի իրավունքների իրականացման համար քաղաքացիական հասարակության մեջ, որտեղ առանձնահատուկը և համընդհանուրը միավորված են, համընդհանուրը անհրաժեշտություն է, իսկ պահանջմունքների համակարգի հարաբերությամբ՝ միայն իրավունք: Արդարադատությունը դառնում է գերագույն նպատակ քաղաքացիական հասարակության մեջ, քանի որ «լավ» օրենքները տանում են զարգացման, իսկ ազատ սեփականությունը դառնում է անհրաժեշտ պայման այդ զարգացման համար:

Անձը և սեփականությունը քաղաքացիական հասարակության մեջ պաշտպանվում են օրենքի ուժով: Պատահական չէ, որ Հեգելը արդարադատությունը, օրենքները, ոստիկանությունը և կորպորացիաները դիտարկում է ոչ թե պետության համակարգում, այլ քաղաքացիական հասարակության համակարգի մեջ, որտեղ քաղաքացիների պատկերացումներն արդարադատության, օրենքների, ոստիկանության գոյության մասին կախված են նրանց դերի ու նշանակության գիտակցման աստիճանից: Այն պետք է պաշտպանի իր անդամին, նրա իրավունքները, իսկ անձն իր հերթին պարտավոր է պահպանել քաղաքացիական հասարակության իրավունքները:

Այսպիսով, ըստ Հեգելի, քաղաքացիական հասարակությունը ինքնուրույն, եզակի անգամների միավորումն է, որը հանդես է գալիս նրանց պահանջմունքների համընդհանրության հիմքի վրա, իրավական կառուցվածքների միջոցով ապահովում է մարդկանց անվտանգությունը և սեփականությունը, իսկ արտաքին կարգ ու կանոնի միջոցով նրանց մասնավոր և ընդհանուր շահերը. դա հենց արտաքին պետությունն է⁴:

Հեգելը բավականին մեծ ուշադրություն է դարձնում նաև քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերության հարցին: Ըստ նրա քաղաքացիական հասարակության մակարդակում դեռևս չի ստեղծվում լրիվ ազատություն: Նա նույնիսկ քաղաքացիական հասարակությունը համեմատում է գատողականության, իսկ պետությունը՝ բանականության հետ: Քաղաքացիների իրավունքների և ազատությունների ձևավորման ու իրականացման համար քաղաքացիական հասարակությունը անհրաժեշտություն է, քանի որ այստեղ առկա է առանձնահատուկի և համընդհանուրի փոխացարձ կապը և փոխպայմանավորվածությունը: Քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս որպես հակասական ընդհանրություն: պատերազմ բոլորը բոլորի դեմ, որի զարգացումը և ձևավորումը, ըստ Հեգելի, արդեն նեթադրում է պետության առկայություն: Պետությունն առաջնային է, որի սահմաններում զարգանում են ընտանիքը և քաղաքացիական հասարակությունը:

Քաղաքացիական հասարակության ներքին բովանդակությունը մարդկանց առանձնահատուկ իրավունքների գոյությունն է, ուր տեղի է ունենում հասարակական հարստության շերտավորում՝ հարստության կուտակումը հասարակության մի բեռնում, իսկ ծայրաստիճան չթափությունը՝ մյուսում⁵: Քաղաքացիական հասարակության մեջ աղքատության պրոբլեմը լուծելու համար հասարակությունը փորձում է դուրս գալ իր սահմաններից երկակի ճանապարհով: Արտաքին ճանապարհը նոր տարածքների գաղութացումն է, իսկ ներքինը՝ ոստիկանության և կորպորացիաների միջոցով: Բայց այդ ճակատարհները չեն տանում հակասությունների հազվահարման: Տեղի է ունենում անցում քաղաքացիական հասարակությունից պետության, որտեղ իրական շարժիչ ուժը քաղաքացիական հասարակությունն է: Քաղաքացիական հասարակությունը, անցնելով նպատակի և իրականության սուբստանցիոնալ համընդհանուրի, անցում է կատարում պետական կարգի: Ազատությունը, մասնավոր սեփականությունը քաղաքացիական հասարակության զարգացման անհրաժեշտ պայման են: Մասնավոր սեփականությունից դուրս անձի ազատությունն անհնար է, և միայն սեփականության մեջ է «անձը բանական»: Հեգելը համարում է, որ ընտանիքը, քաղաքացիական հասարակությունը և պետությունը բարոյականության աստիճաններն են: «Իրավունքի փիլիսոփայության» մեջ ընտանիքը քաղաքացիական հասարակության առաջին բազիսն է, իսկ սոցիալական խավերը՝ երկրորդ: Պետությունը այստեղ ընտանիքի և քաղաքացիական հասարակության զարգացման ավարտն է: Պետությունը բարոյական ամբողջություն է, ազատության իրազորում, իսկ ազատության իրազորումը բացարձակ նպատակն է բարոյականության: Իրականում պետությունը ընդհանրապես առաջինն է, որի շրջանակներում ընտանիքը գառնում է քաղաքացիական հասարակության բջիջը: Ժամանակակից աշխարհում քաղաքացիական հասարակության հիմնական սկզբունքը անձի ազատությունների, իրավունքների ապահովումն է, որոնց մարդիկ կարող են հասնել ամբողջովին կամ մասնակիորեն:

⁴ Տե՛ս Գեգել, *Փիլոսոփիա փրաւա*, Մ., 1990, էջ-208:

⁵ Տե՛ս Գեգել, *Տոչինեւնյա*, տ. III, էջ 245:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 224:

Յուրաքանչյուր քաղաքացիական հասարակություն ունի այնպիսի պետական կարգ, պետություն, որը նրան համապատասխանում է: Քաղաքացիական հասարակությունը ինքն է որոշում, թե ինչպիսի պետական կարգն է համապատասխանում իր իրավունքին և իր վիճակին, հակառակ դեպքում այն չի ունենա ոչ նշանակություն և ոչ էլ որևէ արժեք:

Քաղաքացիական հասարակության և պետության հարաբերությունների համակարգում վրձնորոշ դերը պատկանում է քաղաքացիական հասարակությանը: Եթե խոսքը կատարյալ քաղաքացիական հասարակության մասին է, ապա այն ենթադրում է տարրերի կախիվ գործունեություն և օբյեկտիվ հասարակական կարծիքի առկայություն, հակառակ դեպքում այն չի կոչվում քաղաքացիական հասարակություն:

Կախված քաղաքացիական հասարակության փոփոխման աստիճանից, անհրաժեշտորեն փոխվում է պետական կարգի բովանդակությունը, պետության էությունը: Այս առումով կարեւորվում է ցանկացած ժողովրդի մոտ քաղաքացիական հասարակության ձևավորումն ու զարգացումը, քանի որ դա նրա հոգևոր կյանքի զարգացման հետևանք է, որը որոշում է ցանկացած քաղաքական համակարգի գոյության հնարավորությունը: Որովհետև ոչ թե պետական ինստիտուտները, օրենքներն են որոշում արդարագատության ապահովումը և իրականացումը, այլ՝ քաղաքացիական հասարակության զարգացվածության, հասարակության քաղաքական կուլտուրան, ազգային մենտալիտետը և ընդհանուր քաղաքակրթվածության աստիճանն ու բնույթն է որոշիչը հանգիստնում: Քաղաքացիները հասնում են իրենց ազատության և հոգևոր զարգացման ոչ միայն պետության, ինչպես Հեգելն է նշում, այլ նաև քաղաքացիական հասարակության մեջ: Պետությունն անպայմանորեն անհրաժեշտ պայման է ընդհանրապես անձանց որևէ ազատության գոյության, սակայն ոչ բավարար: Այն քաղաքական համակարգերը, որտեղ պետությունն է որոշիչը անձանց ազատությունների գոյության հնարավորության, այդպիսի քաղաքական համակարգերը ավտորիտար, տոտալիտար ուղղվածություն ունեն: Իսկ եթե քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները չեն հարգված, եթե նրանց առանձնահատուկ նպատակները քաղաքացիական համաձայնության շրջանակներում չի բավարարվում, ապա պետական կարգի հետագա գոյությունը կասկածելի է միայն այն դեպքում, եթե այդ հանգամանքը գիտակցվում ու ըմբռնվում է քաղաքացիական հասարակության անդամների կողմից: Քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս որպես մի ամբողջական համակարգ, որում դրսևորվում են անձանց ազատությունների ու գաղափարների ուղղվածությունը իրենց տարբերություններով ու բազմազանությամբ: Այդ տարբեր կողմերը դրսևորվում են նաև տարբեր իշխանության «ճյուղերի» մեջ, նրանց ֆունկցիաներում և նրանց գործունեության ոլորտներում: Պետության օրգանիզմը դա քաղաքական կարգն է, մինչդեռ քաղաքացիական հասարակության օրգանիզմը դա քաղաքական տրամադրվածության, քաղաքական հարաբերությունների ձևավորման ոլորտն է, որից բխում է հենց քաղաքական կարգը՝ պետությունը: Ծանկացած պետություն գոյություն ունի շնորհիվ այդ քաղաքական կարգի և կառուցվածքային որոշակի համակարգի, որոնք միմյանց անհրաժեշտաբար փոխպայմանավորում են: Ըստ Հեգելի, պետությունը այնպիսի մի համակարգ է, այնպիսի կենսաբանական օրգանիզմ, որ եթե նրա նույնիսկ մի աննշան մաս դադարի գոյություն ունենալուց, ապա այդ ամբողջ համակարգը կոչնչանա: Դրա համար էլ, ըստ Հեգելի, պետք է պետության համակարգում լինի ներդաշնակություն, համադրություն, միասնություն, փոխպայմանավորվածություն:

Որևէ քաղաքական կառուցվածք, քաղաքական կազմակերպվածություն, առաջին հերթին պետության կազմակերպումն է, որպես մի միասնական ամբողջի, որպես օրգանիզմի: Ըստ Հեգելի, ներքին պետությունը հանդես է գալիս որպես քաղաքացիական իշխանություն: Երբեմն քաղաքացիական իշխանությունը, կորցնելով իր նշանակությունը, բովանդակությունը, հենվում է միայն ռազմական իշխանության վրա, ինչպես դա տեղի է ունենում հոռմեական կայսրերի ժամանակ: Սակայն անհրաժեշտորեն ռազմական իշխանությունը պետք է բխի քաղաքացիական իշխանությունից: Ներքին պետական կառուցվածքը բխում է քաղաքացիական համակարգի գործառնական ամբողջությունից: Պետության ներքին գործառնությունն ապահովելու համար առաջանում է անհրաժեշտություն իշխանությունների տարանջատման, որը երաշխիք է հրապարակային ազատության: Պետությունը, որպես քաղաքացիական օրենքների, պետական կառուցվածքի համադրություն, կախված է տվյալ ժողովրդի զարգացվածության աստիճանից: Եթե պետության և քաղաքացիական հասարակության միջև ծագում է հակասություն, ապա որևէ աննշան փոփոխություն միաժամանակյա ազդեցություն է ունենում երկու համակարգերի վրա: Ժամանակակից յուրաքանչյուր քաղաքական համակարգում կարևորվում է պետական կարգի և օրենքների համընդհանրությունը: Այստեղ հատկանշական է, որ պետական ֆունկցիաները և իշխանությունները չեն կարող լինել մասնավոր սեփականություն: Առանձնահատուկ ֆունկցիաները և գործունեության ոլորտները պետության մեջ բնորոշ են որոշակի անձանց, որպես նրա լական պահերի կրողների: Պետության գործունեությունը կախված է անձանց ընդունակություններից, կարողություններից, բնավորություններից, խառնվածքից: Հեգելը քաղաքացիական հասարակության

րակարգի համակարգում, ինչպես նաև պետության մեջ, կարևորում է սովորեցնել, որը ուղղված է և դեպի ներս, և դեպի դուրս:

Այսպիսով, անձ-ընտանիք-քաղաքացիական հասարակություն-պետություն փոխհարաբերությունն է, բարդ համակարգային մի ամբողջություն: Քաղաքացիական հասարակության նպատակը անձի առանձնահատուկ պահանջմունքների, շահերի գոյությունն է ու անհրաժեշտության ապահովումը: Քաղաքացիական հասարակության գոյությունը և գործառնությունը վկայում են համընդհանուր շրջանակներում պետության, պետական կառուցվածքների և պետական ինստիտուտների դերը և նշանակությունը, նրանց ժողովրդավարական բովանդակությունն ու ուղղվածությունը: Դրա համար էլ քաղաքացիական հասարակության մեջ է, որ անձը ձեռք է բերում ազատություն և պահանջմունքների համակարգի բավարարում: Քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս որպես անձի առանձնահատուկ իրավունք, որը փոխակերպվում է համընդհանուր իրավունքի և հակառակը: Քաղաքացիական հասարակությունը կատարում է իր ֆունկցիաները անձանց հարաբերությամբ՝ անընդհատ նպաստելով և պաշտպանելով նրանց նպատակների, շահերի իրականացումը: Միաժամանակ պահանջվում է բոլորից, որպեսզի ներքին վարեն ակտիվ քաղաքացիական գործունեություն՝ անհրաժեշտորեն ապահովելով միջնորդավորված կապի առկայությունը: Այսպիսով, կարելի է առանձնացնել քաղաքացիական հասարակության հետևյալ բնորոշ գծերը:

1. Քաղաքացիական հասարակությունը միջնորդավորված պահանջմունքների համակարգ է, որը հենվում է մասնավոր սեփականության և մարդկանց համընդհանուր իրավական հավասարության վրա:
2. Այն ինքնուրույն անդամների միավորում է, որը իրավական կառուցվածքների միջոցով ապահովում է անվտանգությունը և սեփականությունը, իսկ արտաքին կարգ ու կանոնի միջոցով՝ նրանց մասնավոր և ընդհանուր շահերը:
3. Դա «արտաքին» պետություն է, պետություն կարիքի և դատողականության, որպես շերտավորում ընտանիքի և պետության միջև:
4. Եթե պետությունը իրենից ներկայացնում է որպես տարրեր անձանց միասնություն, որը սոսկ ընդհանրություն է, ապա նկատի է առնվում որոշակի քաղաքացիական հասարակություն:
5. Քաղաքացիական հասարակության մեջ առանձնահատուկը ու համընդհանուրը՝ փոխպայմանավորված են և գոյություն ունեն այդ միասնության մեջ:
6. Պետությունը առաջնային է քաղաքացիական հասարակության նկատմամբ, և նրա հիմքի վրա է ձևավորվում քաղաքացիական հասարակությունը:

А. С. АЛЕКСАНИЯН — Некоторые основополагающие вопросы формирования гражданского общества. — Концепция гражданского общества в истории политической мысли была объектом многосторонних исследований и рассматривалась как одна из основных целей организации демократического общества.

Граждане по отношению к гражданскому обществу и государству имеют различные обязанности и права. Гражданское общество имеет такой государственный строй, который ему соответствует. В настоящее время гражданское общество характеризуется как необходимое условие и средство для реализации гражданских прав и свобод в отношении государственных институтов. На основе этого различаются уровни развития (развитые и слабо развитые общества). Слабо развитое — такое гражданское общество, при котором в пределах всеобщности граждане не могут достичь полной реализации своих прав и свобод. Это означает, что такое гражданское общество как одна целостная система или отсутствует или находится в процессе формирования. В развитом гражданском обществе одновременно развивается и всеобщность и особенность. Они взаимосубусловлены и взаимосвязаны. В этом смысле гражданское общество является необходимым, но не достаточным условием для гражданских прав и свобод. Если гражданское общество находится в процессе формирования, то возникают некоторые противоречия между правами и обязанностями граждан. Если же гражданское общество находится на этапе развития, то у граждан больше прав, чем обязанностей. Представления граждан о форме существования законов и правосудия зависят от степени осознания их роли и смысла.